



KOMITAS
SALON FUNÉRAIRE

Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$665 value)

www.komitas.ca   (514) 331-0400

ՀՅՌ ԲԻՒՐՈՅԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

ՀՅ Դաշնակցության համար հայոց անկախ պետականությունը եղած է եւ կը մնայ անսակարկելի արժէք:

Միրելի՛ հայրենակիցներ, Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումի 33-րդ տարեդարձը կարեւոր առիթ է արժեւորելու անկախ պետականության կայացումը, ինչպէս եւ անդրադառնալու մեր պետության առջեւ ծառայած մարտահրաւէրներուն:

Անկախ պետականությունը իւրաքանչիւր ազգի ինքնակազմակերպման բարձրագոյն ձեւն ու բաղձալի երազանքն է: Այս նուաճումը պահպանելն ու զարգացնելը կը պահանջեն հետեւողական և յամառ պայքար:

Հայ ժողովուրդը կրկին պատմական ընտրութեան առջեւ կանգնեցաւ 1991-ին եւ արցախեան գոյամարտի բովին մէջ կեանքի կոչեց ազատ ու անկախ ապրելու դարաւոր իղձը: Անցեալ երեք տասնամեակներու ընթացքին, հակառակ առկա հարցերուն եւ բացթողումներուն, մեծ յառաջընթաց արձանագրուեցաւ հայոց նոր պետականութիւններու գոյացման ասպարէզին մէջ, ձեւաւորուեցաւ ուժեղ եւ յուսալի բանակ, կը զարգանար երկրի անտեսութիւնը, Հայաստան արտաքին աշխարհին կը ներկայանար որպէս յարգանքի արժանի պետութիւն: Աւելի քան 30 տարի Արցախի անկախ Հանրապետութիւնը գործեց ու արարեց հայ ժողովուրդի անընկճելի ոգին, տաղանդին, Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան շնորհիւ: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը մշտապէս և իր ողջ կարողականութեամբ եղաւ հայոց երկու Հանրապետութիւններու զարգացման գործընթացին մասնակիցը:

Հայաստանի Հանրապետութեան այսօրուան իշխանութեան ազգամիաս գործունէութիւնը յանգեցուց Ատրպէյճանի ցեղասպանական գործողութիւններու միջոցով Արցախի հայաթափումին: Այսօր արդէն անմիջական սպառնալիքի ներքեւ յայտնուած են Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութիւնն ու անկախութիւնը:

Աշխարհաքաղաքական ներկայ պայմաններուն մէջ հայ ժողովուրդէն կը պահանջուի բացառիկ համախմբում և ոգիի արիւթիւն՝ պաշտպանելու եւ պահպանելու համար Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնն ու ինքնիշխանութիւնը, վերականգնելու՝ մեր ազգային արժանապատուութիւնն ու ազգային արժէքներու դերը:

Այս մարտահրաւէրներու լուծումը կը պահանջէ Հայաստանի մէջ նոր որակի իշխանութեան ձեւաւորում, որուն առաջնահերթ ընելիքները պէտք է ըլլան Հայաստանի արտաքին եւ ներքին անվտանգային յուսալի համակարգերու ձեւաւորումը, պատմական բնօրրան՝ արցախահայութեան վերադարձի հարցի հետապնդումը: Իշխանութիւն, որ հայ ժողովուրդին համար կ'ապահովէ իսկական խաղաղութիւն եւ բարգաւաճում:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար հայոց անկախ պետականութեան գոյութիւնը եղած է եւ կը մնայ անսակարկելի արժէք:

Միրելի՛ հայրենակիցներ, Ծնորհաւորելով բոլորդ, անկախութեան տօնին առիթով մենք կը խոնարհինք Հայաստանի անկախութեան եւ ինքնիշխանութեան համար նահատակուողներու անմար յիշատակին առջեւ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ինչպէս երէկ, նոյնպէս եւ այսօր ու վաղը ոչ մէկ ջանք պիտի խնայէ հայ ժողովուրդի ազգային երազանքներու իրականացման համար:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրո
21 Սեպտեմբեր 2024



Սրբազան Ծարժումի Հազարաւոր Համակիրներու Հաւաքը Մարզահամերգային Համալիրին Մէջ



Կարդայ էջ 3

Գանատայի արտաքին գործերի նախարարը կարեւորում է Արցախի հաշտութեան ինքնորոշման իրաւունքի իրացումը

Գանատայի արտաքին գործերի նախարար Մելանի ժոլին Արցախի հայաթափման առաջին տարեկիցի կապակցութեամբ հանդէս է եկել յատուկ յայտարարութեամբ: Վերջին շրջանում Հայ Դատի Գանատայի յանձնախումբը պաշտօնական ակտիւ հաղորդակցութեան մէջ է եղել նախարար ժոլիի հետ:

Լուրը ամբողջութեամբ կարդայ էջ 3:



«Runners for Armenia»-ի հանգանակած 62,000 տոլարը պիտի տրամադրուի ՀՕՄ-ի Ախուրեանի «Մօր ու Մանկան» Առողջապահութեան կեդրոնի կրծքաշողանկարային նոր սարքի գնման



Կարդայ էջ 3



MAZDA GABRIEL ANJOU

THE ALL-NEW 2024 MAZDA CX-5

Kevork Asadourian
General Manager

7050, boul. Henri-Bourassa Est
Anjou, QC H1E 7K7
Tél. : 514 328-7777
mazdagabrielanjou.ca



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Սրբազան Ծարժումի Հազարատր Համակիրներու Հաւաքը Մարզահամերգային Համալիրին Մէջ

Կիրակի օր Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ տեղի ունեցաւ Սրբազան շարժումի հազարատր համակիրներուն հաւաքը, որուն նպատակը վճռական պայքարի սկիզբը յայտարարելն էր:

Հաւաքը սկսաւ Հայաստանի ու Արցախի պետական քայլերգներով: Տէրունական աղօթք եւ օրհնութեան խօսք արտասանեց Տաւուշի թեմի առաջնորդ Բագրատ արք. Գալստանեան:

Հաւաքի ընթացքին ցուցադրուեցաւ ժապաւէն՝ Սրբազան պայքարի նախորդ ամիսներուն կազմակերպած գործողութիւններէն:

ՀՅԴ Տաւուշի Մարզային կոմիտէի ներկայացուցիչ, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գառնիկ Դանիէլեան դիմելով հաւաքի մասնակիցներուն ըսաւ. «Այդ կռիւր տուած ենք, մեր վրայ մահակներ կիրարկած են, նոնակներ նետած, բայց դուք աննահանջ կռուած էք մինչեւ վերջ: Եւ կ'ուզեմ ըսել, որ պայքարը չէ աւարտած եւ նոյնինքն հիմա կը շարունակենք եւ պիտի շարունակենք ու պիտի հասնինք յաղթական աւարտին, որովհետեւ դուք ոչ մէկէ կը վախնաք: Ո՛չ թշնամին, ո՛չ ալ այս իշխանութիւնները կրնան մեզ ետ կանգնեցնել մեր իղձերէն ու նպատակներէն», ըսաւ ան:

Գառնիկ Դանիէլեան դիմեց դահլիճին մէջ ներկայ արցախցիներուն. «Ես կ'ուզեմ մեր արցախցի քոյրերուն ու եղբայրներուն ըսել, որ իրենք այստեղ հիւր չեն, որ սա իրենց տունն է, մեր բոլորի հայրենիքն է, եւ այս ապագային իշխանութիւնները վռնտելէ ետք մենք պիտի վերադառնանք մեր Արցախ, պիտի վերադառնանք մեր տունները»:

Հաւաքի ժամանակ ցուցադրուեցաւ տեսանիւթ՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի չկատարած խոստումներուն մասին:

Ելոյթ ունեցան 44-օրեայ պատերազմի հերոս Մխիթար Գալէեանի մայր Աստղիկ Գալէեանը, «Ճենեսիս Արմինիա» ուղեղային կեդրոնի հիմնադիր Աբրահամ Գասպարեանը եւ արցախցի Արեգա Յովսէփեանը:

Հաւաքի աւարտին Բագրատ սրբազանը յայտարարեց. «Մեր պայքարի աշխոյժ շրջանը կը վերակսինք, հոկտեմբեր 2-ին՝ ժամը 18:30-ին, կը հաւաքուինք Հանրապետութեան հրապարակին մէջ»:

«Կը մտնենք պայքարի եռանդուն եւ հետեւողական փուլ, յամառ, աննահանջ, համբերատար պայքարի փուլ, յաղթանակով երաշխաւորուած: Բոլոր անյաջողութիւնները, թերացումներն ու սխալները իմա են, բացառապէս իմա, իսկ յաղթանակը՝ ձերն է միայն ձերն», յայտարարեց ան:

Հաւաքէն ետք Բագրատ սրբազանը աջակիցներուն հետ երթով ուղղուեցաւ դէպի Միծեռնակաբերդ՝ յարգելու անմեղ զոհերու յիշատակը:

«Կոչում ունինք Միծեռնակաբերդ այցելել եւ ուխտ կնքել, որ այս պայքարին մէջ անդաւազան պիտի մնանք», ըսաւ ան:

Արցախը դիմադրեց 44 օր.

Ուղիղ չորս տարի առաջ Արցախում պատերազմ էր

2020 թուականի Սեպտեմբերի 27-ի պատերազմը փոխեց ուժերի դասաւորուածութիւնը տարածաշրջանում: 44 օր տեւած պատերազմը սկիզբն էր Արցախի՝ արդէն իսկ կանխորոշուած, կորստի: Սակայն Արցախը պայքարում էր, դիմադրում: Արցախի բանակը փաստացի մենակ էր թուրք-ատրպէյճանական բազմահազարանոց բանակի դէմ, նոր սպառնալիքներով եւ վարձկաններով գինուած թուրք-ահաբեկիչների դէմ: Հայաստանը ուղղակի կողմնակից չէր, Արցախում՝ ուղղակի թէ՛ չէր:

Յամառ պայքար, դիմադրութիւն, թշնամու անհաւասար ուժերի դէմ, Արցախի բանակը ճեղքուեց, թիկունքից դարպասները բացուած էր... Հազրուել ընկաւ, ապա՝ Շուշին...

Նոյեմբերի 9-ի եռակողմ պայմանագրով դադարեցուեց ուղղակի գործողութիւններն Արցախում, Արցախի զգալի հատուածը բռնազբաւուեց:

Հինգ հազար զոհ, բազմաթիւ անյայտ կորած, գերեզմաններ, տեղահանուած ժողովուրդ, 4 տարի անց՝ ատրպէյճանական կողմը չի վերադարձնում բոլոր հայ ուղղակիներին:

Պատերազմի հետեւանքներն աղէտալի էին հայ ժողովրդի համար:

Հայկական կողմը կորցրեց Արցախի զգալի մասը: Պայմանագրի ստորագրման գիշերը Ռուսաստանը մօտ 2 հազար խաղաղապահ եւ 470 միւսոր գինամթերք ուղարկեց Արցախ: Ռազմական գործողութիւնների դադարեցման մասին պայմանաւորուածութիւնների պահպանման վերահսկողութեան համար ռուսական զիտակէտերը տեղակայուեցին Արցախի եւ Ատրպէյճանի սահմանի, ինչպէս նաեւ Հայաստանն ու Արցախը միացնող Բերձորի միջանցքի երկայնքով:

Տեղահանուած մի շարք արցախցիներ յետ վերադարձան՝ իրենց ապագան կապելով Արցախի հետ: Սակայն, 2023-ի պատերազմը վկայեց, որ խաղաղապահների ներկայութիւնն անգամ յետ չի պահում Ատրպէյճանին իր բռնազբաւման քաղաքականութիւնից՝ 2023-ին ունեցանք ամբողջական Արցախի հայաթափում, նոր ցեղասպանութիւն եւ գաղթ:

Առայսօր տարբեր գնահատականներ են հնչում 44-օրեայ պատերազմի շուրջ, սակայն զէպքերի ընթացքն, ականատեսների վկայութիւններն ու իրողութիւնները յուշում են, որ ամէն ինչ կանխորոշուած էր, պայմանաւորուած, միայն մեր գինուորների յամառ պայքարի ու հերոսութեան շնորհիւ՝ Արցախը դիմադրեց 44 օր:

Յաւերժ փառք մեր հերոսներին:

Գանատայի արտաքին գործերի նախարարը կարեւորում է Արցախի հայութեան ինքնորոշման իրաւունքի իրացումը

Գանատայի արտաքին գործերի նախարար Մելանի Ժոլին Արցախի հայաթափման առաջին տարեկիցի կապակցութեամբ հանդէս է եկել յատուկ յայտարարութեամբ: Վերջին շրջանում Հայ Դատի Գանատայի յանձնախումբը պաշտօնական ակտիւ հաղորդակցութեան մէջ է եղել նախարար Ժոլիի հետ: Յայտարարութեան մէջ տեղ գտած ձեւակերպումները լիովին համապատասխանում են Հայ Դատի Գանատայի յանձնախումբի քաղաքական առաջնահերթութիւններին:

Թարգմանաբար ներկայացնում ենք նախարար Ժոլիի յայտարարութիւնը:

«Անցեալ շաբաթ լրացաւ մէկ տարին, երբ Ատրպէյճանը սանձազերծեց ուղղակի գործողութիւն Լեռնային Ղարաբաղում՝ դարբեր շարունակ էթնիկ հայերով բնակեցուած տարածաշրջանում: Այս գործողութեան հետեւանքները ծանր էին, դրա արդիւնքում աւելի քան 100.000 խաղաղ բնակիչներ, այդ թւում՝ 30.000 երեխաներ, բռնի տեղահանուեցին Հայաստան՝ երկրում առաջացնելով մարդասիրական կարիքների արագ աճ:

Ատրպէյճանի կողմից շարունակուած ուղղակի գործողութեան նախորդել էր Լաչինի միջանցքով մարդասիրական ապրանքների անցման իննամսեայ շրջափակումը, ինչը խախտել էր Արդարադատութեան միջազգային դատարանի ժամանակաւոր միջոցի կիրառման մասին որոշումը:

Գանատան համերաշխ է այս ճգնաժամից տուժած մարդկանց հետ եւ երախտապարտ է Հայաստանին իր դռները բացելու համար: Այդ իսկ պատճառով 2023 թ. մենք աւելի քան 3.9 միլիոն տղարի մարդասիրական օգնութիւն ենք յատկացրել Լեռնային Ղարաբաղում ստեղծուած իրավիճակից բխող հրատապ կարիքները լուծելու համար:

Գանատան շարունակում է կոչ անել եւ աջակցել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ համապարփակ խաղաղութեան պայմանագրի կնքմանն ուղղուած բովանդակալից բանակցութիւններին, ինչպէս նաեւ կողմերի միջեւ երկխոսութեան եւ վստահութեան ամրապնդման միջոցառումների շարունակմանը՝ այս տարածաշրջանի ժողովրդի համար արդար եւ տեւական խաղաղութեան համար:

Գանատան բազմիցս կոչ է արել անվերապահօրէն ազատել 2020 թ. Ղարաբաղեան պատերազմի բոլոր հայ ուղղակիներին: Մենք նաեւ շարունակում ենք կոչ անել ազատ արձակել Ատրպէյճանից կամայականօրէն ձերբակալուած բոլոր էթնիկ հայերին:

Գանատան աջակցում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բանակցային քաղաքական լուծմանը եւ աջակցում է ուժի չկիրառման, տարածքային ամբողջականութեան յարգման սկզբունքներին եւ ինքնորոշման իրաւունքին՝ այս տարածաշրջանի ժողովրդի համար արդար եւ տեւական խաղաղութեան հասնելու բանակցութիւններում: Սա պէտք է ենթադրի հայ խաղաղ բնակիչների վերադարձի անվտանգ եւ արժանապատիւ իրաւունքը, երաշխաւորի մարդու իրաւունքների եւ քաղաքացիական կենսամիջոցների պաշտպանութիւնը եւ տարածքում հայկական մշակութային ու պատմական վայրերի պահպանումը»:

Հայ Դատի Գանատայի յանձնախումբը շարունակելու է աշխատանքները Գանատայի ինչպէս գործադիր, այնպէս էլ օրէնսդիր իշխանութեան ներկայացուցիչների հետ՝ ղարաբաղեան հիմնախնդրի ներկայ հանգրուանի շուրջ գանատական կողմի օրինակաւ դիրքորոշումները պահպանելու եւ զարգացնելու ուղղութեամբ:

ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի Կեդրոնական գրասենյակ
22/09/2024 թ

«Runners for Armenia»-ի հանգանակած 62.000 տղարը պիտի տրամադրուի ՀՕՄ-ի Ախուրեանի «Մօր ու Մանկան» Առողջապահութեան կեդրոնի կրծքաշողանկարային Գոր սարքի գնման

Կազմակերպութեամբ երկու մոնթրէալահայ երիտասարդներու՝ Շանթ Շահինեանի եւ Արէն Իմամէճեանի, հովանաւորութեամբ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան, «Runners for Armenia» խմբակը մասնակցեցաւ Մոնթրէալի մեծագոյն վազքի մրցումին՝ 2024 Montreal Marathon-ին, որ տեղի ունեցաւ Մոնթրէալի մէջ, 20-22 Սեպտեմբերի շաբաթավերջին:

Երիտասարդները, որոնք Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարան յաճախած են, յաջողած են հաւաքել 85 հոգինոց խմբակ մը, 6 տարեկանէն մինչեւ 66 տարեկան, մեծամասնութեամբ հայեր, որոնք մասնակցեցան 5 քլմ, 10 քլմ, 21,1 քլմ (կէս մարտ) եւ 42,2 քլմ (ամբողջական վազք) մրցումի բաժանմունքներուն:

Ամիսներ առաջ սկսած այս աշխատանքն ու ծրագրումը իր յաջող աւարտին հասցնելու նպատակաւ, Շանթ Շահինեանը (26 տարեկան), որ Université de Montreal համալսարանին մէջ ատամնաբուժութիւն կ'ուսանի, եւ Արէն Իմամէճեանը (22 տարեկան), որ Գոնզորտիա համալսարանի John Molson բաժանմունքին մէջ կը հետեւի տնտեսագիտութեան, յաջողած էին մէկտեղել հայ թէ՛ օտար 40 ընկերութիւններէ եւ 250 անհատներէ նուիրատուութիւններ, որոնց ընդհանուր գումարը առայժմ հասած է 62000 տոլարի: Գումարը ամբողջութեամբ պիտի տրամադրուի ՀՕՄ-ի Հայաստանի Ախուրեանի «Մօր ու Մանկան» Առողջապահութեան կեդրոնին համար խիստ անհրաժեշտ կրծքաշողանկարային (mammography) նոր սարքի գնման:

Տեղին է նշել, որ 1997-ին հիմնուած այս կեդրոնին կից, 2005-ին հիմնուեցաւ ծննդատունը: Այս հիւանդանոցը կը հանդիսանայ Շիրակի մարզի լաւագոյն հիւանդանոցներէն մէկը, որմէ կ'օգտուին շրջակայ աւաններու եւ գիւղերու շուրջ 40.000 բնակիչները:

Նշենք նաեւ, որ նուիրատուութիւնները տակաւին կը շարունակուին. հետեւաբար անոնք որոնք կը փափաքին սատարել այս ներդրումին, կրնան իրենց սրտաբուխ նուիրատուութիւնները կատարել՝ այցելելով ՀՕՄ-ի կայքէջը եւ նուիրատուութեանց բաժնին Mother and Child Birthing Centre / Mor Mangan — Runners For Armenia՝ 6-րդ հանգանակը ընտրելով:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան

Տարածեցէք ձեր «Բորիկոն»ը
www.horizonweekly.ca

Փաշինեանի յայտարարութիւնները Սփիւռքի վեհաժողովին՝ Սիւսի Գաղափարներ՝ Սիւսի Ժամանակի Եւ Սիւսի Վայրի Մէջ

Կ'ուզեմ մեկնաբանել վարչապետ Նիկոլ Փաշինեանի ցնցիչ յայտարարութիւնները, զորս ան կատարեց 18 սեպտեմբեր 2024-ին Երեւանի մէջ կայացած Համաշխարհային հայկական երկրորդ վեհաժողովին:

Փաշինեան մէկուկէս ժամ պատասխանեց հաղորդավարին հարցումներուն՝ աշխարհի տարբեր երկրներէ համախմբուած հարիւրաւոր սփիւռքահայերու առջեւ:

Նախքան Փաշինեանի պատասխաններու էութեան մէջ խորանայը՝ նշեմ, թէ անոր հիմնական հարցը այն է, որ յաճախ կ'ըսէ այն, ինչ որ միտքը կու գայ տուեալ պահուն, առանց երկար մտածելու:

18 սեպտեմբեր 2024-ին մեծաթիւ սփիւռքահայերու ներկայութեան Փաշինեան գործեց երեք մեծ սխալներ.

- 1) շատ սխալ բաներ ըսաւ,
- 2) զանոնք ըսաւ ոչ ճիշդ մարդոց (սփիւռքահայերուն), եւ
- 3) ընտրեց ամէնէն անպատշաճ ժամանակը՝ Հայաստանի վերանկախութեան տօնէն քանի մը օր առաջ՝ անարգելու իր, ինչպէս նաեւ համայն հայութեան հայրենասիրութիւնը:

Ներկայացնեմ քանի մը հատուած՝ հայրենասիրութեան մասին Փաշինեանի ցնցիչ մատնանշումներէն. «Ես ձեզի կ'ըսեմ այն, ինչ որ կ'ըսեմ իմ ընտանիքիս: Մեր մեծագոյն հարցը եղած է մեր հայրենասիրութիւնը: Ընդ որում, ըսածիս մէջ հեզնանք չկայ, այսպէսով չկայ: Մեր ունեցած մեծագոյն հարցը եղած է մեր հայրենասիրութիւնը, իմ ունեցած մեծագոյն հարցս եղած է իմ հայրենասիրութիւնս՝ այն հասկացողութեամբ, որ հայրենասիրութեան այդ մոտեցումը մեր հայրենիքին հետ կապ չունի: Ատիկա ուղղակի հայրենասիրութեան կայսերական մոտեցում է, որ գիրքերով, ժապաւէններով, գրութիւններով, ելոյթներով, հերոսներով, կերպարներով, անուններով, նկարներով ներմուծուած է մեր ընկերային հոգեբանութեան մէջ»:

Փաշինեան անտրամաբանականորէն ունկնդիրներուն ըսաւ, որ «հայրենասիրութեան այս մոտեցումը հիմնական ձգտումն է բացառել գոյութիւնը Հայաստանի Հանրապետութեան՝ իբրեւ անկախ եւ ինքնիշխան պետութեան, Բայց հայրենասիրութեան այս մոտեցումը այնպիսին է, որ մենք հայրենիք չունենանք, այլ միայն գայն տեսականորէն սիրենք, տեսական Հայաստան ունենանք ու սիրենք, գայն պատէն կախենք, կենացներու ատեն յիշենք, կարկանդակներուն վրայ տեղադրենք, սակայն գետնի վրայ չունենանք: Ասիկա պատահեցաւ մեզի վերջին քանի մը հարիւրամեակներուն»:

Անկէ ետք Փաշինեան մեղադրեց հայերն ու «ուրիշներ»։ «Ես շատ կը խօսիմ զօրանոցի մասին: Ես կը հասկնամ, որ շատեր կը կարծեն, թէ ես նկատի ունիմ, որ ուրիշներ մեզ վերածած են զօրանոցի: Ո՛չ, մենք մեզ զօրանոց դարձուցած ենք: Մենք Հայաստանի Հանրապետութիւնը վերածած ենք զօրանոցի՝ հաւատարմով, որ ասիկա ոչ թէ երկիր մըն է, որ պէտք է ապահովէ իր քաղաքացիներուն բարեկեցութիւնը, այլ անիկա խարխալ

մըն է, որուն միջոցով մենք պէտք է հասնինք այլ նպատակներու: Ուրիշները տեսած են, որ շատ պարարտ հող կայ, եւ ցանած են սերմեր՝ ստանալու համար այն պտուղները, որոնք իրենց անհրաժեշտ են: Մեր անձնական բարօրութեան համար մենք պէտք է ճանչնանք մեր հայրենասիրութեան կործանիչ կողմը: Հայաստանի Հանրապետութեան շահերուն պիտի ծառայէր, որ ես հայրենասէր չըլլայի: Ասիկա մեծագոյն վնասն է, զոր ես հասցուցած եմ, այն սէրը, զոր ես տածած եմ իմ երկրիս եւ իմ ժողովուրդիս նկատմամբ: Այնուամենայնիւ, հիմնական հարցը այն է, որ ո՛չ ես, ո՛չ ալ դուք այդ սիրոյ ստեղծիչներն ենք: Ասիկա կայսերական սէր է՝ կայսրութեան կողմէ կազմաւորուած, մեր մէջ ներհոսուած», ըսաւ Փաշինեան:

Այնուհետեւ Փաշինեանը Հայոց ցեղասպանութիւնը ոգեկոչելու հայ ժողովուրդին ջանքերը սխալ կերպով վերագրեց ինքնուրուի Միութեան ձեռնավարութիւններուն՝ «արտօնելով» ինքնուրուի Հայաստանին՝ յիշատակել Հայոց ցեղասպանութիւնը, որպէսզի հակահարուած տայ Թուրքիոյ եւ ՕԹԱՆ-ին: Ան սխալ կերպով պնդեց, որ ինքնուրուի Միութիւնը արտօնեց Յեղասպանութեան յուշարձանի կառուցումը Երեւանի մէջ այն ժամանակ, երբ ինքնուրուի Միութիւնն ու Միացեալ Նահանգները հիւլէական պատերազմի շեմին էին: Այսպիսով, ան անարգեց Հայոց ցեղասպանութիւնը՝ ամօթալի կերպով գայն բնութագրելով իբրեւ խորհրդային քարոզչութեան գործիք:

Փաշինեանի ըսածներուն մեծ մասը սխալ էր, անարգալից եւ հակահայկական: Փաշինեան այս յայտարարութիւնները ըրաւ հարիւրաւոր հայրենասէր հայերու դիմաց, որոնք աշխարհի չորս կողմերէն եկած էին Երեւան՝ իրենց զօրակցութիւնը յայտնելու հայրենիքին, սակայն անոնք միայն լսեցին, որ հայրենասիրութիւնը «կործանարար» է եւ օտարներէն ոգեկոչուած գաղափար: Անոր խօսքերը նաեւ անպատշաճ ժամանակ հնչեցին՝ Հայաստանի վերանկախութեան 33-րդ տարեդարձէն ընդամենը քանի մը օր առաջ: Ասիկա Փաշինեանի վարչակարգին միտումնաւոր քաղաքականութիւնն է՝ պառակտում սերմանել Հայաստանի եւ սփիւռքի միջեւ ու Հայաստանի բնակչութիւնը բաժնել նախկին եւ ներկայ ղեկավարներու կողմնակիցներու:

Նոյն հարցազրոյցին ընթացքին Փաշինեան սխալ մը եւս գործեց եւ չափազանց անտեղի նկատողութիւն կատարեց՝ քննադատելով եւ մերժելով սփիւռքի կողմէ ուղարկուած մարդասիրական օգնութիւնը՝ աշխարհի տարբեր ծագերէն համախմբուած հարիւրաւոր հայերու դիմաց:

Ան ըսաւ. «Ես շատ կ'ուզեմ, որ Հայաստան դադարի կարեկցանքի առարկայ ըլլալէ, դուրս գայ այդ կարգավիճակէն: Ես, անշուշտ, չեմ գիտեր, միշտ չէ, որ իմ յանձնարարութիւններս ճշգրիտ կերպով կը գործադրուին, օրինակ, ես արգիլած եմ, չեմ գիտեր, թէ ատիկա որքանով կը կատարուի, որ Հայաստանի մէջ անոնք (սփիւռքը), ըսենք, գործածուած հագուստներ






ուղարկեն, գործածուած ինքնաշարժներ, կիսամաշ անիւներ, կիսամաշ կօշիկ՝ պետական հիմնարկներուն համար, չեմ գիտեր, որքանոցներուն համար: Կը ներքէք, բայց Հայաստանի կառավարութիւնը ի վիճակի է իր պատասխանատուութեան տակ գտնուող հիմնարկներուն համար նուազագոյնը ապահովել: Այլ խօսքով, կայ այն մօտեցումը, որ կիսամաշ առարկաներ կ'ուղարկեն Հայաստան, անկէ ետք ալ ամիսներով կը ծանուցեն այդ մասին, չեմ գիտեր: Ուղարկուած են մեծաթիւ դեղեր, որոնց ժամկէտը մէկ շաբաթէն կ'աւարտի: Ես ուրախ չեմ այս եղածով, պայքարի մէջ եմ Հայաստանի Հանրապետութեան այս ընկալման դէմ: Հայաստանի Հանրապետութիւնը ինքնիշխան պետութիւն է, որ ունի բարդութիւններ (գոտարուութիւններ): Բայց, ներդրութիւն, ո՞ր պետութիւնը բարդութիւններ չունի»:

Սփիւռքի կողմէ Հայաստան ուղարկուած օգնութեան մասին Փաշինեանի նուաստացուցիչ արտայայտութիւնները խորապէս վիրաւորական են: Ան պէտք չէ խօսի այնպիսի բաներու մասին, որոնց վերաբերեալ ոչինչ գիտէ: Ես նախագահն եմ «Հայաստան-Արցախ» հիմնադրամին, որ նախորդ 35 տարիներուն Հայաստան ուղարկած է աւելի քան մէկ միլիառ տոլարի օգնութիւն, հիմնականին մէջ՝ դեղորայք: Մենք ճշգրտութեամբ կը հետեւինք Հայաստանի բոլոր օրէնքներուն եւ գործընթացներուն: Ոչ ոք կրնայ Հայաստան ուղարկել դեղեր, որոնց ժամկէտը մէկ շաբաթէն կ'աւարտի: Նուիրատուները նախօրօք պէտք է առողջապահութեան նախարարութեան ձեռք բերեն ներածման արտօնագիր, որ կը պահանջէ, որ բոլոր դեղերը ունենան առնուազան մէկ տարուան պիտանելիութեան ժամկէտ: Հակառակ պարագային անոնք կը գրաւուին ու կը փճացուին մաքսային ծառայողներուն կողմէ:

Սփիւռքի օգնութիւնը քննադատելու փոխարէն՝ Հայաստանի կառավարութիւնը պէտք է հրապարակէ ցանկը այն առաջնահերթ ապրանքներուն, որոնք անհրաժեշտ են բնակչութեան համար, եւ քաջալերէ հաւանական նուիրատուները՝ ուղարկելու այդ ապրանքները: Փաշինեան կը վերաբերի այնպէս, կարծէք վարչապետն է հարուստ երկրի մը, որուն բնակչութիւնը ոչինչի կարիք ունի: Ցաւօք իրականութիւնը այդպէս չէ: Սփիւռքին կողմէ ուղարկուած օգնութիւնը թերագնահատելու փոխարէն՝ Հայաստանի կառավարութիւնը պէտք է իր երախտագիտութիւնը յայտնէ բոլոր նուիրատուներուն եւ խրախուսէ զանոնք աւելին ընելու:

Վարչապետին սխալ յայտարարութիւնները՝ հայրենասիրութեան եւ մարդասիրական օգնութեան մասին, ներկաներէն շատերը ցնցիչ վիճակի մէջ դրաւ: Փաշինեան կարծես չի գիտակցիր, որ իր խօսքերը հետեւանքներ ունին Հայաստանին եւ հայերուն վրայ: Ան այլեւս անպատասխանատու փողոցային ցուցարար չէ, որ կարենայ ըսել այն, ինչ որ միտքը գայ:

Յարութ Սասունեան


www.horizonweekly.ca
 facebook.com/pages/horizonweekly
 [horizonweekly](https://instagram.com/horizonweekly)
 [@horizonweekly](https://twitter.com/horizonweekly)
 [YouTube – Horizon Weekly TV](https://youtube.com/HorizonWeeklyTV)

ADVERTISE YOUR BUSINESS HERE


ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ «ՀՈՐԻԶՈՆ»Ի ՁԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՅԷՔ՝ ԺԱԳ ՎԱՐՊԵՏԵԱՆԻՆ
CALL JACK VARBEDIAN (416) 722-9225


Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676
ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ... ԼՍԻՄԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
***Նոր Յաղթ՝ PERMIS DE QUÉBEC**
 Voyages Haig Travel | 4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2 | Tel: + 1 514-284-7676 | Email: info@haigtravel.ca



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ, ԹԻՒ 10, Հոկտեմբեր 2024



ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԶՈՅԳԸ

Տօն Թարգմանչաց Վարդապետաց Ազգային Եկեղեցական Տօն:

Տօնը հայ մտքի ու մշակույթի:

Ազգ ու եկեղեցի դարերէ ի վեր կը նշեն տօնը երկու անգուգական զոյգերու ընդմէջէն այն վարդապետներուն, որոնք թարգմանաբար

փոխանցեցին ու բացատրեցին Աստուածային խօսքի իմաստութիւնն ու ճշմարտութիւնը:

Անգուգական Զոյգը՝ Մեսրոպ Մաշտոց ու Սահակ Հայրապետ, Թարգմանչաց բանակը ղեկավարեցին ու մերժեցին երկրաւոր փառքի մեծութիւնը՝ հեռացնելու խաւարը եւ ճանչնալու Աստուածային իմաստութիւնն ու խրատը:

Անգուգական Զոյգի մտահոգութիւնն էր հոգեւորապէս ու մշակութային նկարագրով անկախանալ, ուրիշներէ տարբերիլ ինքնութեան պահպանմամբ:

Անգուգական Զոյգը եւ իրենց աշակերտները մեր կեանքը զարդարեցին կենդանի գիրերով՝ Աստուածային ճշմարտութիւնը թարգմանաբար հայացնելով:

Կենդանի գիրերը թուղթի վրայ չգրուեցան միայն, այլ դարձան բանակ անյաղթելի, գաղափարի, հաւատքի ու ապրումի վերածուցանման մեր կեանքին մէջ:

Անգուգական Զոյգին եւ անոնց թարգմանչաց աշակերտներուն կողմէ՝ Հայոց գիրերը դարձան 36 զինուորներով անյաղթելի բանակ, մեր ժողովուրդի ինքնութիւնը վտանգող երեւելի եւ աներեւոյթ գոյութեան կանգնելու սպառնալիքներուն դէմ պատնէշ կանգնելու:

Մէկ խօսքով Ե. Դարը ոսկեայ տառերով արձանագրուեցաւ մեր պատմութեան էջերուն մէջ, որովհետեւ հայ ազգը պայծառակերպուած ոչ միայն ստեղծեց իր ինքնուրոյն գիրերը, այլեւ ինքզինք յաւերժացուց:

Այսօր թարգմանիչ վարդապետները ուր են մեր կեանքին մէջ: Զգոյշ ենք համաշխարհայնացման վտանգաւոր ալիքներու հոսանքներէն, որոնք միայն կրնան մեզ հեռացնել մայրենիէն, հարազատէն եւ ազգայինէն:

Եկէք պահենք թարգմանչաց ոգին եւ դառնանք դպիրները «Անեղին Բանին», Աստուծոյ խօսքին ճշմարտութեան:

Ահա անչափելի ու անկշռելի արժէքը ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԶՈՅԳԻՆ եւ Թարգմանչաց Վարդապետներուն:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հոկտեմբեր ամսուան երկրորդ շաբաթ օրը, տօնն է Սուրբ Թարգմանիչ Վարդապետներուն:

Սուրբ Սահակ-Մեսրոպ «անգուգական զոյգ»ը հայ ժողովուրդը քրիստոնէայ պահելու համար՝ գիրերու գիտէն անմիջապէս ետք, ձեռնարկեցին Աստուածաշունչի թարգմանութեան՝ ամէն ճիգ ըրին հայր պահելու հայ եկեղեցւոյ ծոցին մէջ: Անոնք Աստուծոյ խօսքը հայացնելով՝ հայ քրիստոնէան մօտեցուցին Աստուծոյն, ամէն բան կատարեցին, որպէսզի հայ քրիստոնէան իր լեզուով, իր գիրերով ու իր յատուկ աղօթքներով խօսի Աստուծոյ հետ:

Սուրբ Սահակ-Մեսրոպ «անգուգական զոյգ»ին հիմնական աշխատանքներէն մէկը եղաւ պատրաստել նոր սերունդ մը, որ պիտի լծուէր թարգմանական ու ուսուցչական աշխատանքներուն: Կորին, Մովսէս Խորենացի, Եզնիկ Կողբացի, Եղիշէ, Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայ Հայոց Պատմութեան էջերուն վրայ ոսկեայ տառերով գրեցին իրենց անունները: Աւելի ուշ, Սուրբ Գրիգոր Նարեկացի եւ Սուրբ Ներսէս Շնորհալի իրենց լուսնային ձգեցին հայ մշակույթի եւ հայ եկեղեցւոյ գանձանակներուն մէջ եւ դասուեցան Թարգմանչաց Վարդապետներու շարքին:

Այսպիսի սերունդներու ժառանգորդներն ենք մենք:

Ոսկեդարէն 1500 տարի ետք, Հայ ժողովուրդը ապրեցաւ իր պատմութեան ամէնէն դաժան ժամանակաշրջանը: Թուրքը փորձեց քանդել դարաւոր պատմութիւնն ու հարուստ մշակույթն ունեցող մեր ազգը: Կործանեց եկեղեցիները, ատերեց դպրոցները, փորձեց փճացնել մեր գիրն ու գրականութիւնը: Հայը դարձաւ պանդուխտ: Հայը դարձաւ անտուն:

Հայ եկեղեցին եւս անմասն չմնաց այս կտորածներէն: Սահակ Խաչապետան տարագիր Կաթողիկոս իր հօտին հետ դուրս դրուեցաւ Սիսի պատմական Կաթողիկոսարանէն: Ան իր հօտը առաջնորդեց եւ երկար թափառումներէ ետք, Հայոց Հայրապետը հասաւ Լիբանանի ծովեզերեայ Անթիլիաս քաղաքը:

Հայրապետը իր Աթոռը հաստատեց Անթիլիասի մէջ: Անոր առաջին եւ հիմնական աշխատանքը եղաւ հիմնել Կիրակնօրեայ Դպրոցներ, որոնց աշխատանքը պիտի ըլլար հայ փոքրիկները, հայ պատանիներն ու երիտասարդները դաստիարակել քրիստոնէական դաստիարակութեամբ եւ զանոնք պահել հայ եկեղեցւոյ ծոցին մէջ: Արդ, Կաթողիկոսական Սրբատառ Կոնդակով, 28 Յունիս 1930-ին, բացատրեց, թէ ինչ է Կիրակնօրեայ Դպրոցը: Անոր հիմնական նպատակն էր պատրաստել այնպիսի սերունդներ, որոնք պիտի դառնային ապագայի ղեկավարները:

Ուրախութեամբ կը յայտնենք, որ «Լուսաւորիչ»ի Հոկտեմբեր ամսուան թիւը նուիրած ենք Գանատայի Հայոց Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներուն:

Մեր Թեմի Կիրակնօրեայ Դպրոցները իրենց կարելին կ'ընեն, որ հայ մանուկն ու պատանին մօտենան Քրիստոսի, սիրեն Աստուածաշունչը, սորվին Աստուծոյ խօսքը, կապուին եկեղեցւոյ եւ ծանօթանան անոր սրբազան արժէքներուն:

Վարձքը կատար մեր տնօրէններուն եւ ուսուցչական կազմի անդամներուն:

Ազգային Առաջնորդարանը նախաձեռնեց եւ իրականացուց Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներուն համար նոր դասագիրքերու ծրագիր մը: Դասագիրքերու հեղինակն է՝ Danish-Armenian Charitable Mission-ի Գործադիր Տնօրէն Պարոն Արշալի Գաբունեան, որուն ղեկավարութեամբ, իրենց մասնագիտական ներդրումը բերած են հոգեբան-մանկավարժ՝ Սիւզաննա Սարգսեան, արուեստագէտ՝ Շուշան Գէորգեան եւ մանկավարժ-խմբագիր Նայիրի Մկրտիչեան:

Վարձքը կատար Պարոն Արշալիին եւ աշխատակից անձնակազմին: Քաջալերենք մեր զաւակները, որ յաճախեն Կիրակնօրեայ Դպրոց, որովհետեւ հոն պիտի ստանան քրիստոնէական դաստիարակութիւնը: Հոն՝ անոնց հոգիներուն մէջ պիտի դրոշմուի Տիրոջ խօսքը: Հոն՝ անոնց սրտերուն մէջ պիտի ցանուի սէրը՝ հանդէպ մեր եկեղեցւոյ: Հոն՝ անոնց միտքը պիտի լուսաւորուի Թարգմանիչ Վարդապետներուն մեզի փոխանցած սրբազան արժէքներով:

Հետեւաբար, «Եթէ կ'ուզէք, որ այսօրուան պատանութիւնը վաղը չայլաստի, հոգ տարէք անոր Կրօնական Դաստիարակութեան»:

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

«Թող խաղաղութեան Աստուածը ձեզի կարողութիւն տայ՝ ամէն տեսակ բարեգործութեամբ իր կամքը կատարելու, որովհետեւ ինքն էր որ մեռնելէն յարուցանեց մեր Տէր Յիսուսը, ան՝ որ իր արիւնով կնքուած յախտեանական ուխտով Հովուապետ եղաւ ամբողջ հօտին: Աստուած ինչ որ կամենայ՝ թող ներգործէ մեր մէջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ, որուն փառք յախտեանս: ԱՄԷՆ:» (Եբրայեցի 13:20-21):

“God has raised from death our Lord Jesus, who is the Great Shepherd of the sheep as the result of his blood, by which the eternal covenant is sealed. May the God of peace provide you with every good thing you need in order to do his will, and may he, through Jesus Christ, do in us what pleases him. And to Christ be the glory forever and ever! Amen.” (Hebrews 13.20-21)





ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Եկեղեցույ մը բարեկարգ եւ պայծառ վիճակը կախում է իր ժողովուրդին գիտակցութենէն եւ կենդանի հաստատութենէն:

Հայ ժողովուրդը աշխարհաճանօթ է իր կրօնասիրութեամբ: Ասոր ապացոյցներն են ինչ միայն իր կառուցած հազարաւոր հոյակապ ու հայատիպ տաճարներն ու մատուռները, որոնց ակերակներն անգամ հիացում կ'առնեն դիտողներուն, այլ նաեւ իր ընտանեկան կեանքը, որուն սրբափայլ եւ կրօնասեր գեղեցկութիւնը այժմ բժատորուելու վրայ է դժբախտաբար:

Ողջ քրիստոնէայ աշխարհը մտահոգ է այս հարցով: Որովհետեւ միեւնոյն երեւոյթը կը դիտուի ամէն տեղ, անհատական եւ ընտանեկան կեանքէն ներս: Սակայն, ասիկա տկարութիւն մըն է, որուն դարմանը գտնուած է:

Այդ դարմանը Կրօնական դաստիարակութիւնն է, որ պէտք է իրականացուի Եկեղեցույ միջոցով: Կրօնական դաստիարակութիւն՝ Եկեղեցույ բեմով, այսինքն՝ լաւ պատրաստուած պաշտօնեաներու կենդանի խօսքով, կանոնաւոր ժամերգութեամբ եւ պատանիներու մասնաւոր դաստիարակութեամբ. որովհետեւ այսօրուան պատանութիւնն է, որ պիտի կազմէ վաղուան ժողովուրդը:

Այս մասնաւոր դաստիարակութիւնը կը տրուի Կիրակնօրեայ Դպրոցներով:

Աշխարհաւոր պատերազմէն ետք, առաւել շեշտուեցաւ մեր Մայրենի Եկեղեցին բարեկարգ եւ զօրաւոր պահելու անհրաժեշտութիւնը, որովհետեւ մէկ կողմէն հայ ժողովուրդին առտնին, տնտեսական եւ քաղաքացիական կեանքին քայքայումը իր բնաշխարհին մէջ եւ ասոր հետեւող հալածանքներն ու կոտորածներն. Միայն կողմէն՝ հակակրօնական շարժումներ եւ միտումներ, վիրատրեցին սուրբ զգացումները մեր ժողովուրդին:

Հոգեւոր վերին իշխանութիւնը չէր կրնար անտարբեր դիտել Հայաստանեայց Եկեղեցույ կեանքը վրդովող այս երեւոյթը:

Եւ մեր պեփառ եւ Վեհափառ Սահակ Ա. Հայրապետը, 1930 Յունիս 28-ին, Կիրակնօրեայ դպրոցներու մասին իր հրատարակած սրբատառ ԿՈՆԴԱԿՈՎ բացատրեց ամէնուն, թէ ինչ է Կիրակնօրեայ Դպրոցին նպատակը:

Հայրապետական հրամանին եւ հրահանգին վրայ Կաթողիկոսական թեմերու մէջ կազմակերպուեցան Կիրակնօրեայ Դպրոցներ եւ կազմակերպուելու վրայ են, Ն.Ա. Օծութեան կողմէն նշանակուած ընդհանուր վերատեսուչ Տիար Լեւոն Զէնեանի ձեռքով եւ Ա. Առաջնորդներու օժանդակութեամբ:

Եպիսկոպոսական ժողովը, որ Մարտ 4-18 գումարուեցաւ Կաթողիկոսարանի մէջ, նկատի առնելով՝ Կրօնական Դաստիարակութեան պէտքը՝ մեր Եկեղեցույ զաւակներուն համար, որոշեց ինչ միայն մեր Ազգային դպրոցներու մէջ շեշտել կրօնքի դասերուն կարեւորութիւնը, այլ նաեւ կազմակերպել Կիրակիի Դպրոցները Կաթողիկոսութեանս բոլոր Թեմերուն մէջ:

Կարեւոր կը համարենք ուշադրութիւն հրաւիրել հետեւեալ կէտերուն վրայ:

Ա. Մեր Կիրակնօրեայ Դպրոցները, կը կազմակերպուին ուղղակի Կաթողիկոսարանի կարգադրութեամբ եւ Ա. Առաջնորդներու հսկողութեան ներքեւ, ինչպէս նաեւ Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդ անուն տեղական մարմիններու գործակցութեամբ:

Այս դպրոցներու կազմակերպութեան համար պատրաստուած եւ հրատարակուած է ԿԱՆՈՆԱԳԻՐ մը, 34 յօդուածներով, վաւերացուած Ն. Ա. Օծութեան Վեհ. Սահակ Կաթողիկոսի 1931 Փետ. 1 թուակիր պաշտօնագրով:

Բ. Ոմանց կարծածին պէս՝ մեր Կիրակնօրեայ Դպրոցները կազմակերպելու եւ կատարելու համար Ամերիկայէն տրամադրուած գումարներ գոյութիւն չունին. Միայն Համաշխարհային Կիրակնօրեայ Դպրոցներու Ամերիկայի Կեդրոնական Վարչութիւնը կը հոգայ ընդհանուր Վերատեսչին տարերջակը, այն ալ ժամանակի մը համար միայն:

Ասիկա լաւ գիտնալով՝ հարկ անհրաժեշտ է, որ Առաջնորդարաններ իրենց բոլոր կարելի միջոցներով եւ որդեւեր ծնողներ իրենց կարողութեան չափով օգնեն, որպէսզի սրահներու եւ մանր մունր ծախքերու համար Կ.Դ. Խորհուրդները դժուարութեան չմատնուին:



Այս բոլորը պաշտօնապէս կը յայտարարուի եւ ջերմապէս կը յանձնարարուի որ Ա. Առաջնորդներ, պաշտօնական մարմիններ եւ բոլոր եկեղեցականներն ու աշխարհականներ, իրենց անկեղծ ու անվերապահ օժանդակութեամբ, քաջալերեն Կիրակնօրեայ Դպրոցներու կազմակերպումը ամէն տեղ եւ ապահովեն անոնց կանոնաւոր գործունէութիւնը:

1. Որովհետեւ պէտք է գիտնալ, որ հայ փոքրիկներ, հայ պատանիներ եւ հայ երիտասարդներ զաւակներն են հայ ժողովուրդին:

2. Հայ ժողովուրդին զաւակները պէտք է դաստիարակուին իրենց Մայրենի Եկեղեցույ մէջ:

3. Հոգեւոր վերին իշխանութեան պարտքն է հսկել Հայոց Եկեղեցույն բարեկարգութիւնն ու պայծառութիւնը:

Եթէ կ'ուզէք որ այսօրուան պատանութիւնը վաղը չայլաստի, հոգ տարէք անոր ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ:

«ՀԱՍԿ» Ամսաթերթ
Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 4
1932 - Ապրիլ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՕԺՏՈՒԵՑԱՆ ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՎ

Ինչպէս յայտնած էինք, հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանի եւ մեկենասութեամբ Մոնթրէալաբնակ Ազգային Բարերար Տիկին Շաքէ Կէօնեանի, Ազգային Առաջնորդարանը նախաձեռնեց եւ իրականացուց Թեմիս Կիրակնօրեայ Դպրոցներուն համար նոր դասագիրքերու ծրագիրը:

Ծրագիրը կ'ընդգրկէ Կիրակնօրեայ Դպրոցներու 6-7, 8-9 եւ 10-11 տարեկան աշակերտներուն համար կրօնական, եկեղեցական եւ բարոյագիտական բովանդակութեամբ դասագիրքեր, որոնք պիտի օգտագործուին Թեմիս բոլոր Կիրակնօրեայ դպրոցներուն մէջ: Ծրագիրը կը ներառէ աշակերտական դասագիրք, ուսուցիչի ուղեցոյց եւ խաղի ու վարժութիւններու տետրակ:

Նոր սերունդի հոգեւոր դաստիարակութեան նպաստող այս կարեւոր առաքելութիւնը կը ձգտի օժանդակութեան ձեռք մեկնել Կիրակնօրեայ Դպրոցներու ուսուցիչներուն, որպէսզի Աստուածաշունչն ու քրիստոնէական դաստիարակութիւնը սիրելի ու հաճելի դարձնէ աշակերտներուն:

Դասագիրքերու հեղինակն է՝ Danish-Armenian Charitable Mission-ի Գործադիր Տնօրէն Պարոն Արշաիր Գաբունեան, որուն ղեկավարութեամբ, իրենց մասնագիտական ներդրումը կը բերեն հոգեբան-մանկավարժ՝ Սիւզաննա Սարգսեան, արուեստագէտ՝ Շուշան Գէորգեան եւ մանկավարժ-խմբագիր Նայիրի Սկրտիչեան:



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՈՑՆԵՐ

Արդ, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանի եւ կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանիս Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի Վարիչ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վրդ. Եագուպեանի, 27-28 Յուլիսին Քեպէգի եւ 2-3 Օգոստոսին Օնթարիոյի մէջ տեղի ունեցան Թեմիս Կիրակնօրեայ Դպրոցներու ուսուցչաց տարեկան աշխատանոցները:

Այս խիստ կարեւոր ծրագրին համար, Հայաստանէն ժամանած էր դասագիրքերու հեղինակ՝ Պարոն Արշաիր Գաբունեան, որ մանրամասնօրէն ներկայացուց դասագիրքերուն կրօնական, եկեղեցական եւ բարոյագիտական բովանդակութիւնը, մանկավարժական մօտեցումները, դասաւանդման մեթոտաբանութիւնն ու անոր կից՝ աշխատանքային ատենամարզանքի, վարժութիւններու ու հմտութիւններու օժանդակող նիւթերը:

Աշխատանոցի երկրորդ բաժնով, ուսուցիչները ունեցան գործնական աշխատանք, որուն ընթացքին իրաքանչիւր ուսուցիչ կարգաց իրեն տրամադրուած Աստուածաշնչական որոշ հատուածներ եւ փորձեց գտնել նիւթեր, որոնք կը դիրացնեն ուսուցման մեթոտը: Նիւթեր գտնելով, ուսուցիչները կրցան աւելի ճիշտ ձեւով բացատրել Աստուածաշունչը:

Աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը օրհնութեան ու գնահատանքի խօսքով եզրափակեց բոլոր աշխատանոցները: Ան բարձր գնահատեց Պարոն Գաբունեանի կատարած աշխատանքը: Ապա, անդրադարձաւ Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչին զոհողութեան եւ նուիրումին՝ շեշտելով, որ միայն հաստատուած կատարած գործը կ'արգասաւորուի եւ մենք մեր հաստատուած ամուր պարիսպ կը դառնանք մեր պատանիներուն ու երիտասարդներուն համար:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց աշխատանքը բոլոր ուսուցիչներուն, որոնք օրէ օր աւելի նոր եւ արդիական միջոցներով կը զարգացնեն կիրակնօրեայի ծրագիրը: Սրբազան Հայրը նաեւ նշեց, որ նման հանդիպումները միայն աշխատանոցներ չեն, այլեւ հոգեւոր մեր կեանքը աւելիով ամրապնդելու առիթներ:





**ՍՈՒՐՔ ՅԱԿՈՔ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ
(ՄՈՆԹՐԵԱԼ)**

Սուրբ Յակոբ եկեղեցու Կիրակնօրեայ Դպրոցը սկսա գործել՝ Կիրակի, 14 Սեպտեմբեր 1980-ին, Խաչվերացի տունի օրը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Ա. Աթոռին տարագրեալ եւ ծերունագարդ Հայրապետ՝ Սահակ Բ. Կաթողիկոս Խաչապետան, Հայաստանեայց Եկեղեցու Կիրակնօրեայ Դպրոցները հիմնած է 1929-ին եւ այդ առիթով հրատարակած իր Կոնդակին մէջ գրած. «Մենք կ'ուզենք, որ մեր Մայրենի Եկեղեցուն զաւակները հարազատ զաւակները ըլլան իրենց ընտանիքին, ազգին եւ եկեղեցուն»: Իսկ Աթոռակից Բարգէն Ա. գրած է «...կրօնական դաստիարակութիւնը պատմական իրաւունքն է հայ ժողովուրդին: Սահակ-Մեսրոպի եւ Վռամշապուի թագաւորի կատարած մեծ գործին զնահատանքը շատ բան կը կորսնցնէ իր ներքին իմաստէն, եթէ զանց առնուի կրօնական դաստիարակութիւնը Հայ եկեղեցու, Հայ տան եւ Հայ Դպրոցին մէջ: Եթէ կ'ուզէք որ այսօրուան պատանութիւնը վաղը չայլասերի, հոգ տարէք անոր կրօնական դաստիարակութեան՝ Կիրակնօրեայ դպրոցներով»:

Այս գիտակցութեամբ եւ ոգիով է, որ 1980-ին Հոգեւոր Հովին ու Հոգաբարձութիւնը կ'որոշեն Համայնքը օժտել Կիրակնօրեայ Դպրոցով:

Հովիւր որոշումը իրականացնելու համար գործը կը յանձնէ խումբ մը կամաւորներու: Սկզբնական այս աշխատանքին մեծապէս կ'օժանդակեն Այտա Պաղչեճեան, Յարութիւն Փալանճեան, ինչպէս նաեւ Տէր եւ Տիկ. Զաւէն եւ Վալանթին Ապտալեան: 1997-էն ի վեր Տնօրէնն է Թորոս Պապիկեան:

Ս. Յակոբ Կիրակնօրեան շատ դժուարութիւններու մէջէն անցնելով՝ հասած է մինչեւ թուականն եւ 2024-25 տարեշրջանը անոր հիմնադրութեան 45 ամեակն է:

Մինչեւ 1997-98 տարեշրջան, Կիրակնօրեայի վերջին կարգը եղած է 6-րդ դասարանը: Նոյն տարեշրջանէն մինչեւ 2001-2002 տարեշրջան՝ վերջին կարգը եղած է 8-րդ դասարանը. Իսկ անկէ ետք, վերջին կարգը 11-րդ դասարանն է: 2021-22 տարեշրջանին նաեւ ունեցաւ CEGEP-ի դասարան մը, մասնաւոր ծրագրով:

«Մաշտոցի Արձագանգ»

Կիրակնօրեայ դպրոցի պարբերական «Մաշտոցի Արձագանգ»ը հրատարակութեան երեք հանգրուաններ ունեցած է: Առաջին հանգրուանին, զայն խմբագրած են խումբ մը ուսուցիչներու օգնական աշակերտ պատանիներ: Առաջին թիւը լոյս տեսած է 20 Դեկտեմբեր 1992-ին, իսկ վերջինը՝ 11 Դեկտեմբեր, 1994-ին. ընդհանուր հրատարակուած է 13 թիւ: Երկրորդ հանգրուանը կ'երկարի 1995-2002: Այս տարիներուն, պարբերականը լոյս տեսած է իբրեւ տարեգիրք՝ իւրաքանչիւր տարեշրջանի աստիճան: Երրորդ հանգրուանի սկզբնաւորութիւնը կը զուգարդիայի «Մաշտոցի Արձագանգ»ի հրատարակութեան 10-ամեակին. 2002-2003 տարեշրջան: Այս թուականէն ասդին «Մաշտոցի Արձագանգ»ը լոյս կը տեսնէ տարեկան 10 ամսական (Սեպտեմբեր - Յունիս) եւ մէկ բացառիկ թիւերով: Զայն կը խմբագրէ Շաղիկ Թորիկեանը: Այս վերջին հանգրուանի «Մաշտոցի Արձագանգ»ը հարուստ բովանդակութիւն կ'ունենայ: Անկէ պատճենահանեալ օրինակներ տրամադրելի կ'ըլլան բայց տարածումը առաւելաբար կը կատարուի համացանցի միջոցով է :

www.sourphagop.org

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տունի օրը, դպրոցը ունեցաւ իր Կայքէջը հետեւեալ բաժիններով. Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր երեք հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Ճաշու Աւետարան, Սուրբեր, Տօներ, Church Timeline, Daily Bible:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱԼ

Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան կ'ընթանայ Հայաստանեայց Եկեղեցու Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցումը՝ համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր կը դասաւանդուին Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ, հայերէն Աստուածաշունչ բանալի եւ կարդալ, Հայկական տօներ, Հայ Սուրբեր, Հաւատամբ, Հաւատով Խոստովանիմ, Հայ եկեղեցու պատմութիւն, Հայ եկեղեցու տաղաւարներ, երգեր եւ շարականներ, Ձեռային աշխատանքներ:

- 10:30-11:00 Հաւաք
- 11:00 -11:10 «Հայր մեր», Աղօթք, Օրուան խորհուրդը, Կիրակնօրեայ Դպրոցներու մաղթերգ
- 11:10 - 11:45 Ա. դասապահ
- 11:45- 12:20 Բ. դասապահ
- 12:20-12:55 Գ. դասապահ
- 12:55-13:05 Աղօթք, Մասի բաշխում, Արձակում:

- 2024-25 Տարեշրջանի դասարաններ
- Մանկապարտէզի Բողբոջ եւ Կոկոն
 - Ծաղիկ եւ Նախակրթարան Ա.
 - Նախակրթարան Բ. եւ Գ.
 - Նախակրթարան Դ.
 - Նախակրթարան Ե.
 - Նախակրթարան Զ.
 - Երկրորդական Ա.
 - Երկրորդական Բ. եւ Գ.
 - Երկրորդական Դ. եւ Ե.



2024-25 Տարեշրջանի Կիրակնօրեայ Դպրոցի Կամաւոր Խմբակը ունի 18 անդամ եւ կը ներառէ՝ Տնօրէն, Երկրորդականի Պատասխանատու, Դաստիարակներ, Օգնականներ, Կայքէջի պատասխանատու, «Մաշտոցի Արձագանգ»ի խմբագրութիւն եւ Social Media-ի պատասխանատու: Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէ՛ք .

- «Մաշտոցի Արձագանգ»ի 2024-ի Տարեկան բացառիկը՝ <https://www.sourphagop.org/period/vol31special.pdf>
- <https://www.facebook.com/sourphagop.org>
- https://www.instagram.com/sh_sundayschool/

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐՔ ՅԱԿՈՔ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ

**ՍՈՒՐՔ ԳԷՈՐԳ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ
(ԼԱԻԱԼ)**

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է երկնքի արքայութիւնը»: (Մատթէոս 19:14)

Այս կոչով Յիսուս դիմեց այն հոծ բազմութեան, զորս թգնիի եւ ձիրթնիի ճիւղերով զինք դիմատրելու եկած էին Երուսաղէմի մուտքին: Այդ նոյն կոչով ու գիտակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկայիշատակ հայրապետ՝ Սահակ Կաթողիկոս Խաչապետանը, շուրջ 95 տարիներ առաջ, ձեռնարկեց եւ հրամանը տուաւ Կիրակնօրեայ դպրոցներու ստեղծումին, քաջ գիտակցելով, որ մանուկները մեր ազգի ու եկեղեցու յոյսն ու ապագան են, պէտք է զանոնք Քրիստոնէական հաւատքով ու սկզբունքներով թրծել՝ պատրաստելու համար հաւատարմ եւ քրիստոնէական արժէքներով հայորդիներ:

